ՊՈՍՏԱՆԴԵՆՈՒՊՕԼԻՍ—ՏԱՐԻ—ԹԻՒ—2170—ՀԻՆԳՇԱԲԹԻ—31—ՕԳՈՍՏՈՍ—Ն. Տ.—12—ՍԵՊՏԵՄԲԵՐ—1878

ԳԱՅՄԱՆԸ

Տարեկան գին Կ. Պոլսոյ համար 8 մէջ.
» » Գաւառաց » 10 մէջ.
Վեցամսեայ » Կ. Պոլսոյ » 4 մէջ.
» » Գաւառաց » 5 մէջ.

Յանձնարարման տողը մէկ անգամի համար 3 դրուշ, երկու անգամի համար 2 դրուշ, աւելի անգամներու համար զատ աւելորդութիւն կը լայ։

ՊԱՊԻՐԱՍ

ԼՐԱԳԻՐ

ԳԱՅՄԱՆԸ

Դուրս գացած լրագրաց ճանրու ծախքը խմբագրութեան վրայ է։

Լրագրոյս վերաբերեալ նամակ կամ որ և իցէ գրութիւն խմբագիր—Տնօրէնին պիտի ուղղուի, Ղալաթիա Սանտրքճըլար Ճատտէսի թիւ 198, Նօրո խան, Մասխի գրատունը։

Ճանրու ծախքը չվճարուած նամակ չընդունուիր։

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ՏՆՏԵՍԱԿԱՆ

ՊՈՍՏԱՆԴԵՆՈՒՊՕԼԻՍ 31 ՕԳՈՍՏՈՍ

ՔԱՂԱՔԱԿԱՆ

Ներկայ ամենէն կարևոր լուրն է Եւրոպական մեծ տերութեանց Գերմանիոյ հրաւիրանօք միաբան ծանուցագիր մը պատրաստելն, որով Բ. Դուռը պիտի հրաւիրեն եղեր Պէրլինի դաշնադրութեան Յունաստանի և Գարատաղի վերաբերեալ մասերը գործադրելու, և այս գործադրութիւնը մինչև ցարդ յապաղելուն համար յանդիմանութիւն պիտի տան եղեր։ Զարմանալի է որ տերութիւնք Պէրլինի դաշնադրութեան այն յօդուածոց միայն կարևորութիւն կուտան՝ որք զէն 'ի ձեռին անոնց գործադրութիւնը պահանջողներու կը վերաբերին, ինչպէս են Յունաստան և Գարատաղ։ Բայց աշխարհ կրնայ վկայել որ դաշնադրութեան այս երկու կառավարութեանց վերաբերեալ կէտերուն գործադրութիւնը միմիայն Բ. Դրան ձեռքը չէ. Դուռը Մէհմէտ Ալի փաշան Ալպանիա ղրկած էր՝ դաշնադրութեան Գարատաղի վերաբերեալ մասը գործադրելու, բայց անոր պաշտօնին վախճանն յայտնի է։ Ուրեմն՝ Բ. Դուռը պատերազմասէր և իրենց երկիրն ու կրօնքը պաշտպանելու մտադիր քաջ ժողովուրդմ'ունի իւր առջև, որ առանց վայրենութենէ իսկ խորշելու իւր անկախութիւնը կը պաշտպանէ և չուզեր գլուխ ծռել ոչ միայն Գարատաղցւոց, այլ և Աւստրիոյ։ Կարծենք այս նկատմամբ տերութեանց յայտարարութիւնները բոլորովին իրաւացի չեն։ Ի՞նչ կրնայ ընել Բ. Դուռն երբ Ալպանիոյ և Պոսնիոյ ժողովուրդը նոյն իսկ կեդրոնական իշխանութիւնը չը ճանչեր և ինքնագլուխ կերպիւ զինեալ իւր անկախութիւնը կը պաշտպանէ։ Դուռը յորդորներ կրնայ տալ որք Ալպանիացւոց և Պոսնիացւոց վրայ կրից բորբոքման ժամանակ կարելի է բնաւ ազդեցութիւն չունենան։ Բոլոր Ալպանիա միացած է Գարատաղի դիմադրելու և Յունաստանի երկիր չտալու համար, և այս նպատակաւ Ալպանիական միութիւն մը կազմուած է։ Բօսկօրիցայի մէջ Գարատաղցիք և Ալպանիացիք արդէն կռիւ բրած են, և կրնան նորէն իրարու հետ զարնուիլ։ Գարատաղի իշխանը նամակ մը գրած էր Բ. Դրան՝ խնդրելով որ դաշնադրութեան Գարատաղի վերաբերեալ յօդուածոց համաձայն հողերու փոխանակութիւնը 'ի գործ դրուի, այսինքն Բ. Դուռը Գարատաղցւոց յանձնէ այն տեղերն՝ որք ըստ դաշնադրութեան Գարատաղի պիտի մնան, և Նիքօլա իշխանն իւր զօրաց գրաւած տեղերը պարպելով Բ. Դրան վերադարձնէ։ Կայսերական կառավարութիւնը պատասխանած էր թէ այս պաշտօնին համար Մէհմէտ Ալի փաշան ղրկած է։

* * *

Պոսնիոյ և Հերսէքի վերջին լուրերուն նայելով, Աւստրիացիք երկիրը վերակազմելու և ապահովութիւնը վերադարձնելու գործին ղրաղած կերևին։ Բայց Իսլամ ապստամբաց խումբեր լեռներն ու ճանապարհները բռնած են, և հաղորդակցութեանց կ'սպառնան։ Օգոստոս 3/15 ին Մոսթարէն կը գրեն թէ երբ Աւստրիացի զինուորք առանձնակի քաղաքէն դուրս ելնեն՝ կը սպաննուին, ուստի զգուշութեան միջոցներ ձեռք առնուած են այս սպանութեանց վերջ տալու համար։ Քառասուն հազարէն աւելի Ալպանիացի և Պոսնիացի ապստամբք՝ ամենայն կատաղութեամբ կը կռուին Աւստրիացւոց դէմ. բոլոր կամուրջները քանդուեր են. վեց հազար Պաշը Պոզուգ Եապլէնիցայի կիրճը բռնած են, որ Պոսնիան Հերսէքի կը կցէ։ Աւստրիական զօրքն, որ կարծուածէն նուազ զօրաւոր ելաւ, կը պարտաւորի սուինով այն ամուր դիրքերն առնուլ, բայց պատերազմի այս եղանակն Աւստրիական զօրաց յարմար չդար։

Աւստրիացւոց Մոսթար մտնելէն առաջ Ջարդ կրող ընտանիք Եուվանովիչ զօրավարին աղերսագիր տուեր են խնդրելով որ մարդասպանք գտնուելով պատժուին. բայց ներկայ պարագայից մէջ ո՞ւր կարելի է գտնել զանոնք, ուստի զօրավարը պատասխաներ է թէ քննութիւն պիտի ըլլայ։ Եուվանովիչ հրահանգ ընդունած է Թուրքերը գգուելու, որպէս զի դիմադրութեան առաջքն այս կերպով առնուի։ Նոյն զօրավարը խիստ քաղաքավար ընդունելութիւն մ'ըրած էր Իսլամ երևելեաց, որք Օսմանեան հրամանատարաց ընթացքը պարսաւած և իրենց տեսակցութենէն դոհ ըլլալով մեկնած էին. բայց այս երկիրներուն մէջ, առանց պարգևի և դրամական ընծայներու չոր քաղաքավարութիւնը խիստ շուտ կը մոռցուի։ Այսն բան կը ցուցնէ որ Աւստրիացիք խիստ ծանր և դժուարին գործի մը ձեռնարկեցին, և ասոր համար իրենց զօրաց թիւն աւելցնելու պարտաւորեցան։ Բայց ահա այս պատճառաւ Ռուսիա ալ իւր Բումէլիի մէջ պահելու զօրաց թիւը հարիւր հազարի պիտի հանէ եղեր՝ փոխանակ յիսուն հազարի, զոր Պէրլինի դաշնադրութիւնը սահմանած էր։

* * *

Ասիական բարեկարգմանց համար Պէրլինի տերութեանց խորհուրդէն առաջ Նուպար փաշային Անգղիոյ կառավարութեան մատուցած մէկ յիշատակագիրն հրատարակուած է ինն։ Նեստասներորդ Դարանուն Անգղիական պարբերականին մէջ։ Նուպար փաշային ծրագիրը կառաջարկէ՝ ինչպէս Լիբանանու մէջ՝ տերութեանց հաւանութեամբ ընդհանուր կառավարիչ մը կարգել Հայաստանի վրայ, ծննդեամբ Հայ ըլլալու պայմանաւ, և անփոփոխելի, եթէ բաւ ընթացք բռնէ։ Ծրագրին գլխաւոր կէտերն ասոնք են. կառավարիչը պէտք եղած բարեկարգմանց հսկէ, և ասոր համար կատարեալ իշխանութիւն ունենայ. Քիւրդերն և ուրիշ վայրագ ցեղերը զսպելու և անոնց յարձակումն արգիլելու համար ժանտարմներ հաստատէ Քրիստոնեայներէ և Իսլամներէ բաղկացեալ. յանձնախորհուրդ մը կազմուի դատաստանական գործերը կարգադրելու, և Եւրոպական պաշտօնատարներ գործածուին ասոր համար. առժամանակեայ դատարաններ կազմուին երեք կամ հինգ անդամէ բաղկացեալ, որոց մին կամերկուքն Անգղիացի ըլլայ. տրոց վերատեսուչն Անգղիացի ըլլայ՝ Բ. Դրան կողմէն կարգեալ. տեղական ժողովներ հաստատուին տրոց բաշխման վրայ հսկելու. բայց մինչև որ Հայք ինքնակառավարութեան վարժուին, այս ժողովները քաղաքական իրաւասութիւն չունենան։ Նուպար փաշա այս պայմաններով կը կարծէ եղեր թէ Փոքր Ասիոյ վրայ Անգղիոյ պաշտպանութիւնը զինուորական մեծ զօրութիւն պահելու և մեծամեծ ծախք ընելու պէտք չունենար։ Բայց չենք գիտեր թէ Անգղիական կառավարութիւնն ո՛րչափ կարևորութիւն տուած է այս ծրագրին։ Թայմզ լրագիրն՝ այս ծրագրին վրայ խօսելով՝ նորէն կը յայտարարէ թէ Անգլօ-Թուրքական պայմանագրութեան գործադրութիւնը ժամանակի կարօտ է։ Անգղիա պատասխանատուութենէ չպիտի խորշի՝ Արևելեան ազգաց բարձրագոյն ընկերական կարգի և քաղաքակրթական կառավարութեան հասնելու առիթ տալով, քանզի այն ազգերն իրենց կենսական զօրութիւնը ցոյց տուած են, բայց Սուլթանը չպիտի իւր ժառանգութենէն զրկուի, այլ՝ ընդհակառակն՝ խալիֆայութեան բարեկարգութեամբ Իսլամ աշխարհը քաղաքակրթութեան պիտի հրաւիրուի եղեր։

Տէպա լրագիրը նոր յօդուածի մէջ կը գրէ. "Հայերը Թուրքերէն նը-ւազ դժուարութիւն պիտի տան Անգղիոյ։ Այս ժողովուրդը բաժանեալ, ոտնակոխ եղած և ստրկութեան վարժեալ ցեղ մ'է, ուրկէ դարերէ ի վեր անհամար հարուստ և խելացի մարդիկ ելած են, բայց ո՛չ երբէք քաջասիրտ մէկն որ Օսմանեան լուծին դէմ մաքառիլ և իւր երկրին բաղդը վերաշինել մտքէն անցունէ։ Հայերը Թուրքաց հնազանդած են, որոց խչխանութիւնն ընկճող էր. Անգղիացւոց աւելի դիւրութեամբ պիտի հըպատակին, անոնց հետ յարմարող յատկութիւններ ունենալով առևտրական հանճարը, գործերու տաղանդը։ Հայերը փոխադարձաբար Անգղիացիներէն ուրիշ բան չպիտի պահանջեն, բայց եթէ Քիւրդերու հարըստահարութենէ պաշտպանութիւն։ Կը վախցուի միայն որ Ռուսք վերջին պատերազմաւ Հայաստանի կեդրոնին մէջ հաստատուելով, Հայերն Անգղիացւոց ձեռքէն չխլեն, և այս կերպիւ Անգղիոյ առջև ծանր դժուարութիւններ չհանեն։"

Տէպայի այս խորհրդածութեանց մէջ նշանակեալ Հայոց բաժանման միակ դարմանը միութիւնն է։ Միութեամբ միայն կրնան Հայք թերևս իրենց երկրին բաղդը վերաշինել բայց այս միութիւնն ամեն երկրէ և ամեն դաւանութենէ եղող Հայոց մէջ պէտք է կատարեալ ըլլայ։ Այս նկատմամբ մեք Հայաստանեայց եկեղեցւոյն գիրկը մնացող ազգին մեծագոյն մասը միայն, որ Թուրքիոյ Հայաստանին մէջ կը բնակի, վերակենդանութեան գըլխաւոր տարը կը համարինք։ Այս մասը կեդրոն մը պիտի ըլլայ, ուր պէտք է դիմեն և միանին բոլոր Հայք, ինչ կրօնքէ և ըլլան և ո՛ր երկրի մէջ և գտնուին։ Այս նկատմամբ՝ Թուրքիոյ Հայաստանէն ուրիշ կողմեր գաղթական երթալը ծանր սխալ մը համարելի է։

ՀԵՌԱԳՐԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

Լոնտրա 10 սեպտ.

Նոքս գնդապետը Գարատաղի նոր սահմանը գծելու պաշտօն ունեցող յանձնախումբին, Համ գնդապետն ալ Պուլղարիոյ յանձնախումբին անդամ անուանեցան։

Լարնաքայէն եկած հեռագիրք կը ծանուցանեն թէ Կիպրոս կղզւոյն մէջ Ջերմը (սրթա) կաւելնայ։

Վիէննա 10 սեպտ.

Հազար Պոսնիացի ապստամբք Պէլինայի և Սամացի մէջ տեղն ամրացած են։

Պէլգրատ 10 սեպտ.

Հին Սերպիոյ սահմանագլխոյ հսկող Սերպիական զօրաց վրայ նոր կօրութիւնք աւելցան։

Պէրլին 10 սեպտ.

Գերմանիոյ կայսեր վրայ վերջին անգամ ատրճանակ պարպող Նոպիլինկ եղեռնագործը մեռաւ այսօր։

Տէրութեանց ժողովոյ որոշման համեմատ տէրութեանց միջնորդութիւնը խնդրող Հելլենական ծանուցագիրը վաղը կը սպասուի։

Նիւ-Եորք 9 սեպտ.

Լուիզիանայի վիճակը սարսափելի է. մեռնողներուն թիւը կը շատնայ։ Սովի երկիւղ կայ։ Գործերը բոլորովին դադրած և 80000 մարդ առանց անպրուստի մնացած են։

Վիէննա 10 սեպտ.

(Գուշտանական)։ Զաչ զօրավարին գունդը Պլևաչի ամուր դիրքին վրայ քանի մ'ապարդիւն յարձակումներէ ետև, մեծ կորուստներ ընելով Զավալիէ քաշուեցաւ՝ Աւստրիոյ հողը։ Թրէպիչնի աւստրիական պահակաջոկատը չարաթ օրն ապստամբաց մէկ յարձակումը վանեց։

Սէրայէվոյէն Տօպրի երթալու ճանբան ապատ է։

Փարիզ 10 սեպտ.

Միհաթ փաշային Կ. Պոլիս վերադառնալն ետ ձգուեցաւ։

Ա.յս առաւօտ հասած հեռագիրներ

Լոնտրա 11 սեպտ.

Պէլկրատէն լուր կուգան թէ Ռուսիա խորհուրդ տուեր է Սերպիոյ կառավարութեան որ իւր զօրքերը շուտով չարձակէ և պայմանեալ վճարքները՝ չարուցնակէ։

Աղէքսանդր կայսեր տօնը մեծ հանդիսիւ կատարեցաւ այսօր։

Աթէնք 11 սեպտ.

Պատերազմական գործոց նախարարին մէկ հրամանագիրն արձակուրդ ստացած բոլոր զօրականներն ու սպայներն անմիջապէս դրօշակի ներքև կը կոչէ։

Փարիզ 11 սեպտ.

Միհաթ փաշան Փարիզ կ'սպասուի։

Լոնտրա 11 սեպտ.

Տէյլի Նիւս կըսէ թէ հաւանական չէ որ Անգղիա միւս տէրութեանց հետ միաբանի 'ի նպաստ Յունաստանի. նմանապէս հաւանական չէ որ տէրութիւնք բան մ'ընեն առանց Անգղիոյ։

Լոնտրա 11 սեպտ.

Օսմ. Քոնս.		12 7/8
Փոխ.	1865	17 3/4
»	1869	17 1/4
»	1871	53 3/4
»	1872	24
»	1873	14 5/8
» Եգիպտ.		75 1/4
Անգղ. Քոնս		95 1/16

Փարիզ 11 սեպտ.

Օսմ. Քոնս. 13,2 1/2

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Այսօր Բամազանի 15 և Հիրքայի Շէրիֆի տօն ըլլալով, Վեհ. Սուլթանը Թոփդաքուի պալատը գնաց և հոն կատարուած կրօնական արարողութեանց ներկայ դտնուեցաւ։

Կայսերական հրամանաւ՝

Մաքսատանց վերատեսուչ Զիւհտի էֆէնտին ելումտից նախարար անուանեցաւ։

Պետական խորհրդոյ անդամ Գուլյումճեան Պետրոս էֆէնտին հանքաց և անտառաց պաշտօնատան տնօրէն անուանեցաւ։

Բորթուգալեան Միքայէլ էֆէնտին Պետական խորհրդոյ անդամ անուանեցաւ։

Դարձեալ կայսերական հրամանաւ՝

Ալիւրին վրայ դրուած տուրքը վերցաւ, և այս գործին հսկող յանձնախումբը լուծուեցաւ։

Արքունի փողերանոցին տնօրէն Տիւզեան Վսեմ. Միհրան պէյ երեքշաբթի օրը Եըլտըզի պալատն հրաւիրուելով, առաջին կարգի Մէճիտիէ պատուանշան ստացաւ Վեհ. Սուլթանէն։

Վեհ. Սուլթանն իւր թիկնապահներէն մին Մէհմէտ Ալի փաշային տունը զրկելով՝ իւր ցաւակցութիւնն յայտնեց անոր ընտանեաց և իմացուց թէ տէրութեան կողմէ թոշակ պիտի կապուի անոր տիկնոջն և զաւակաց։

Թղթադրամոց վիճակին բարւոքման միջոցներ խորհելու պաշտօն ունեցող նոր յանձնաժողովն երէկ երկրորդ անգամ գումարեցաւ։ Կըսուի թէ երէկուան նստին մէջ որոշեր է, 1՝ հարիւրնոց թղթադրամին գինը 130էն 100ի իջեցնել. 2՝ հարիւրին 4 տոկոս և հարիւրին 1 գլխամէջ սահմաններ է թղթադրամին համար, և այս շահուն գլխամասին վճարման համար այլ և այլ հասոյթներ սահմաններ և Պանքային յանձներ է։

Յանձնաժողովն որոշեր է եւև որ հինցած ու մաշած թղթադրամց հետ փոխանակուելու համար նոր թղթադրամ կոխելը դադրի։

Ալաճա—Տաղի ճակատամարտին մէջ գերի ինկած Ֆերիդ Հաճի Բաշիա փաշան, որ Ահմէտ Մուխթար փաշայի աներձագն է, երկուշաբթի օրը Կ. Պոլիս հասաւ Սէվասթօպոլէն։

Սերայէվոյի զինուորական հրամանատար Հաֆիզ փաշան ալ, որ Աւստրիացւոյ անձնատուր եղած էր։ Թրիէստի վերջին շոգենաւով Կ. Պոլիս հասաւ։

Կըսուի թէ Հաճի Բաշիա փաշան Սպարապետի դուռը բանտարկուելու է՝ Ալաճա—Տաղի պարտութեան վրայ հարցաքննուելու համար։

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՕԼԻՍ

ԷՍՀԱՄԸ ՈՒՄՈՒՄԻԷ

30 օգոստ. չորեքշաբթի իրիկուն		14, 9
31 օգոստ. հինգշաբթի առաւօտ բացուելուս		14, 2
կէս օրին		13,38
Բումպիի երկաթուղի	ֆր.	52 25
Թղթադրամ	վր.	303

ԸՆԹԱՑՔ ԱՐԺԵԹՂԹՈՑ

Կ. Պոլիս 30 Օգոստոս

Սոսիէթէ Ժէնէրալի բաժ. Անգղ.	վր.	4, 2
» փոխանակութեան	»	4,
Կ. Պոլսոյ Պանքային	»	6,30
Քրէտի Ժէնէրալ	»	5,12
Քրէտի Օսմբրո—Թիւրք	»	—
Փոխ. 1863	ֆր.	81
» 1865	»	87
» 1869	»	81
» 1872	»	25 1/2
» 1873	»	72
Թրամուայ	Օսմ. վր.	1 50

ԱԶԳԱՅԻՆ

Երէկ Ռուսաց կայսեր անուան տօնին առթիւ Ս. Պատրիարք հայրը խրիմեան սրբազանին՝ հետ Գէօյիւքտէրէ գնաց իւր շնորհաւորութիւնը մատուցանելու Լոպանոֆ իշխանին, որ սիրալիր մեծարանօք ընդունեց զանոնք։

Կիմանանք թէ Ս. Պատրիարք հայրը նամակ ստանալով Գեր. Խորէն սրբազանէն, որ Բեգրոպարկ կը գտնուի եղեր, երկուշաբթի օրն հեռագրաւ հրաւիրեր է Ն. Սրբազնութիւնն որ անյապաղ Կ. Պոլիս վերադառնայ։

Կարնոյ Հայոց երեւելիներէն Ղէնէվիզեան Յարութիւն էֆէնտի, որ երկու շաբաթէ 'ի վեր Կ. Պոլիս եկած է, մայրաքաղաքս դտնուող Կարնեցի Տէր Ներսէսեանց խաչատուր խան էֆէնտիի հետ ամէն ջանք 'ի գործ կը դնեն՝ Կարնոյ դաւառի Հայ ժողովրդոց գաղթականութեան առաջքն առնելու համար։ Այդն Մեծ. ազգայինք անդադար Ս. Պատրիարք հօր և ազգային փարչութեան դիմելէ զատ, կը լսենք թէ Բարձր. Մեծ Եպարքոսին և այլ գլխաւոր նախարարաց ալ դիմած են, խնդրոյն ծանրակշռութիւնն զգացնելու և անյապաղ դարման խնդրելու նպատակաւ։ Արդէն, ինչպէս որ ծանուցած ենք, Ս. Պատրիարք հայրն ալ թէ՛ Բ. Դրան, և թէ Եւրոպական երաշխաւոր տէրութեանց դիմելով՝ թէ և յուսալից պատասխաններ ստացած և հեռագրով 'ի Կարին հաղորդած է, բայց խնդիրը վերջին ծայր ստիպողական ըլլալով, ոչ թէ յուսատու պատասխաններ, այլ անմիջական աղդու արդիւնութիւններ կ'սպասուին, ինչպէս որ կը տեսնուի հետեւեալ պաշտօնական նամակէն, զոր Կարնոյ ազգային փարչութեան ժողովները ղրկած են 'ի Պատրիարքարան օգոստոս 20 թուականով։

Ամենապատիւ Սրբազան Տէր։

7 ապրիլ և 8 օգոստոս թուականներով 'ի համար 42 և 72 ընդարձակագրէն գրած եմք ձեզ քաղաքիս և շրջակայ ազգայնոց գաղթականութեան պատրաստուելուն վրայ. օրերս Ռուսներու քաշուելուն լուրը հետազօտեմ հաստատուելուն հետ մէկտեղ գաղթականութիւնն ալ օր ըստ օրէ դիւզացւոց և քաղաքացւոց մէջ կիրականանայ. այն ասպիճան այս մասին տագնապն աւելցաւ, որ մեք սարսափեցանք անդադար ժողով կազմել՝ յորդոր և համբաւում և ամէն միջոցներն վատնել գաղթականութիւնն արգիլելու համար. դիւրաւ կարելի պիտի ըլլար այս աղետից առաջն առնուլ եթէ Ռուսներու մեկնելուն լուրը՝ ինչպէս Հայոց՝ նոյնպէս և այս կողմի Թուրքաց մէջ տարածուելուն հետ մէկտեղ՝ Թուրքերն առանց բացառութեան անդադար սպառնալիք չընէին և չաւելցնէին խեղճ և անտէր դիւղացիին սարսափն. և ատուգիւ եթէ մարդ շրջահայեաց կերպով չմտածէ և չտրամաբանէ, շատ պէտք է վախնալ սոյա սպառնալիքէն. դեռ Ռուսաց քաշուելու լուրը միայն տարածուած չտարածուած և ահա շուկաներուն անկիւններն Հայերը ծեծել հայհոյելն սկսան. նոյն իսկ պաշտօնական անուանուած մարդիկն ամենայն անզգուշութեամբ կարծես իրենց վարմունքովն կը քաջալերեն Թուրք մոլեռանգներն, որով մեր ամէն համբաւներն և յորդորներն անմիջապէս կոչնչանան նոցա սպառնալեաց առջև։

Ուստի այս անգամ դարձեալ այս կնճռոտ պարագայից մէջ ըստ մեր սովորականին Ձերդ Սրբազնութեան խնամոց և գթութեան կը դիմենք՝ նոյնպէս և նամակիս հետ մէկտեղ հեռագրած եմք՝ նոյն իմաստով*, որոյ պատճէն ներփակեալ է։

Բայց թող ներէ Ձերդ Սրբազնութիւնն՝ եթէ այս մասին կը համարձակիմք մի քանի դիտողութիւն ընել կեդր. վարչութեանդ ընթացից վրայ։

Այս քանի՞ցս է որ գաղթականութիւն կըլլայ կապադակեմք. քանի՞ցս է որ կը գրեմք և անդադար Պատրիարքարանի դիւանը կը լեցնեմք պաշտօնական և անպաշտօն նամակներով՝ թէ՝ օգնութիւն անմիջական դարման և ապահովութիւն հաճեցէք կարգադրել։ Դո՞ւք Սրբազան Տէր՝ ընդ Ձեր կեդր. վարչութիւնդ նախ քան զմեզ հարկ է որ խորհիք և կարգադրէք գաղթականութեան առջևն առնելու համար, դուք քան զմեզ կանխաւ պէտք էր որ հոգ տանէիք և մեզ օժանդակէիք Ձեր ընդհանրական միջոցներով, փոխանակ այսպէս ընելու, խնդիրներն սրչափ ալ կարևոր ըլլան՝ կերևի թէ ամենուն մի և նոյն կարևորութիւնը կըտրուի։ Գրեցինք՝ կը գրենք գարձեալ՝ խընդիրը Սրբազան Տէ՛ր, հեռաւանքը խիստ աղետաբեր և կորուստն անդարմանելի է. փութով օգնութիւն՝ շնորհք և անմիջական դարման հասուցէք. կեդր. վարչութիւնդ թող միակողմանի չդիտէ այս գաղթականութեան խնդիրը։

Մենք, ինչպէս գրեցինք, ամէն ջանք 'ի գործ դրած ենք. Սրբազան Առաջնորդը գիւղերը ղրկած ենք մէկ քանի ազգայնոց հետ. ամենքս ալ դարձեալ գիւղերը ցրուած եմք, կը համբենք և կը յորդորենք, բայց լոկ համբաւում՝ չոր խօսք ի՞նչ արդիւնք կրնայ բերել ռամիկ գիւղացւոյն վրայ։ Ինչպէս յառաջմանէ խնդրած՝ նոյնը կը կրկնեմք. դեսպանատանց միջոցաւ ճար մը հնարեցէք, ի՞նչ կուզէք ըրէք, օգնութիւն փութացուցէք մեզ, որպէս զի կարենամք չարեաց առաջքն առնելու. ապա թէ ո՛չ, յո՛ւշ Ձեզ, Ս. Հայր, հարիւր հազար ազգայնոց ներկայ թշուառութիւնը, գաղթականութեան երեսէն կրելիք անհատնում տառապանաց ծանրութիւնը, ապագային սարսափելի պատասխանատուութիւնը և անէծքը եթէ մասամբ իւիք մեր վրայ ծանրանալու ահէն կը սոսկամք, Ձերդ Բարձր Սրբազնութիւնը և կեդր. վարչութիւնը կը խնայեմք այս ապագայ դատապարտութենէն։

Ներեցէք, ըսինք, Սրբազան Տէր վատնգը վերահաս և ծանր ըլլալով, չկրցինք գրել սովորականին պէս, այլ մեր վէրքը իւր արեամբ և շաբաւով գրինք բժշկապետիդ առջև, դարման և օգնութիւնը թողով Ձերդ բարձր դթութեանը և կեդր. վարչութեանդ բարձր խնամոց։

20 օգոստոս 1878

Կարին

Կը լսենք թէ Ս. Պատրիարք հայրը անցեալ ուրբաթ օր՝ Մեծ-Եպարքոսին հետ ըրած տեսակցութեան մէջ կարնոյ գաւառի Հայ ժողովրդոց գաղթականութեան առաջքն առնելու համար անմիջական անօրէնութիւններ ընելու հարկին վրայ շատ պնդեր է։ Բարձր. Մեծ-Եպարքոսն յայտարարեր է թէ կարևոր և հիմնական բարենորոգմունք պիտի ըլլան Հայաստանի մէջ, և այս անգամ ոչ թէ խօսքով, այլ արդեամբք։

Զէյթունի Հայոց մէջ տիրած յուզման պատճառներն ալ բացատրելով, Ս. Պատրիարք հայրը խնդրեր է որ անոնց վրայ ծանրացած տրոց թեթևութիւն շնորհուի ըստ առաջնոյն, մարդասպան գայմագամին դատաստանը տեսնուի, և անոր ոճրագործութեան վկայ եղող անմեղները բանտէն ազատին. և ըստ սրումբ Զէյթունի ժողովուրդը բոլանդակապէս Հայ է, հոն Հայ գայմագամ մը ղրկուի։

Նորին Սրբազնութիւնը նոյն և հետևեալ օրերը դեսպաններուն ալ այցելութեան երթալով՝ Պերլինի դաշնադրութեան 61րդ յօդուածին անյապաղ գործադրութիւնը խնդրեր է։ Դեսպանք յուսալից խոստումներ տալէ ետև, յայտարարեր են Ն. Սրբազնութեան թէ ինչ խնդիր որ ուննայ, պէտք է իրենց դրէ, որովհետև ըստ Պերլինի դաշնադրութեան պարտաւոր են զանոնք ուշադրութեան առնուլ և արժան եղածը գործադրել տալ։

Լսածնուս նայելով՝ Ս. Պատրիարքը քանի մը կարևոր խնդիրներ ներկայացնելէ զատ՝ խնդրեր է նաև որ Հայաստանի դաւառաց մէջ բնակող Հայ ժողովրդեան վստահութիւն ազդելու և գաղթականութեան առաջքն առնելու համար՝ կրօնական յանձնաժողով մը ղրկուի հոն։

Կըսուի թէ տէրութեանց դեսպաններէն ոմանք Ս. Պատրիարքին շրջաբերականը նախ իրենց կառավարութեան և յետոյ Բ. Դրան հաղորդեր են յատուկ գրերով։

ԱՐԱՐԱՏԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Ուրախութեամբ լսեցինք որ Արարատեան ընկերութիւնը հրահանգ

* Անցեալ շաբթու ծանուցած ենք։

առած է վաստակաբանի իր տեսչին, նոյն գաւառի զանազան գիւղերն այցելելով նոցա վրայ ոչնչաբեղած տեղեկութիւնները հաղորդել Գործադիր ժողովոյ, որպէս զի ընկերութիւնն ըստ այնմ դպրոց մը ևս հաստատէ յարմար դատուած տեղը։ Ընկերութեան տեսուչ Գ. Մարկոս Նաթանեան՝ արդէն ընդարձակ տեղեկութիւններ հաղորդած է Դատուան և անոր մերձակայ գիւղերն ըրած ուղղութեամբ։ Այժմ դընացած է ի Հայոց Ձոր՝ մանրամասն քննութեան համար, և մեծ յոյս կայ որ Նոյեմբերի սկիզբն Արարատեան նոր վարժարան մ՚ալ կը բացուի՝։

Գոհ ենք տեսնելով որ մերեկեղեցական հարք ալ իրենց ձեռքէն եկած օգնութիւնը չեն զլանար այդ ընկերութեան, և ինչպէս Խրիմեան սրբազան անցեալ կիրակի օր Մայր եկեղեցին ասուած քարոզին մէջ Արարատեան ընկերութեան նպատակին և գործունէութեան վրայ խօսեցաւ և ազդու կերպիւ յորդորեց առհասարակ ժողովուրդը, բայց մանաւանդ պանդուխտներն այս փրկաւէտ ձեռնարկին ըստ արժանւոյն ամրակցելու, կը յուսանք որ մեր ուրիշ պատուարժան հարք ալ Նորին սրբազնութեան օրինակին հետևելով թէ՝ ազգերնուս մեծ ծառայութիւն մատուցած կըլլան և թէ քաջալերութիւն մը ասոյն ազգօգուտ ընկերութեան։

ԱՐԵՒԵԼԵԱՆ ԿԱԹՈՂԻԿ ՀԱՅՔ ԵՒ ԼԵՒՈՆ ԺԳ

Մայրաքաղաքիս Օթամանլու անուն թերթին մէջ կը կարդանք թէ Արևելեան կաթոլիկ Հայոց Պատրիարք Գեր. Տ. Յովհան Քիւրքեան արքեպիսկոպոսն Հռոմի Նոր Պապին շնորհաւորութեան և հպատակութեան գիր գրեր է, բայց Լէոն ԺԳ Կ. Պոլսոյ պապական նուիրակին բերնով պատասխաններ է թէ զինքն և իր հետ գանուող կղերն ու ժողովուրդը հերձեալ, հերետիկոս և ապստամբ ճանչելով՝ չկրնար որ և է հոգևոր յարաբերութիւն ունենալ իրեն հետ՝ մինչև որ Պատրիարքութենէ չհրաժարի, մեղայ չըսէ, Հռոմ չերթայ և իրեն համար անօրինուելիք ապաշխարանքն ու պատիժը չկրէ։

Այսպէս ահա Հռոմի Նոր Պապն ալ իր նախորդին պէս Արևելեան կաթոլիկ Հայերը միջնադարեան անողոք խստութեամբ ընկճելու և վերստին Հասունեանի լուծին ենթարկելու անլեզվի քաղաքականութեան կը ծառայէ։

ՀԻՆ ՊԱՅԱԶԻՏԻ ՇՐՋԱԿԱՆԵՐԸ

Ա.

Այն լուրը, որ բերեց մեզ լրագիրը, իբր թէ Բայազէթի Սանջակը կրկին վերադարձնվում է Թիւրքիային, յղացրեց իմ մէջ ցանկութիւն՝ շրջել գոնէ Բայազէթի շրջանը և այս երկրի վերաբերութեամբ մի կարճաւոր նկարագիր հաղորդել Հայ ընթերցող հասարակութեան «Մշակի» միջնորդութեամբ, և այդ ցանկութիւնը իրագործելու նպատակով մի ծառայական յանձնարարութիւն խնդրելով յունիսի 10 ին ճանապարհ ընկայ դէպի Դիադին գիւղը։ Եօթն օր միայն ունելով իմ իրաւանց տակ վճռեցի լինել Սուրբ Օհաննու վանքում և մի մի քանի տեղի նշանաւոր տեղեր միայն։ Դիադինը Բայազէթից յետոյ երկրորդ տեղն է բռնում թէ իր գիրքով և թէ իր բազմամարդութեամբ, բնակիչներն են Քուրդեր, որոնք նստակեաց կեանք վարելով, պարապում են հողագործութեամբ. հողի գլխաւոր արտաբերութիւնն է ցորեն և գարի։ Այստեղի ցորենը Բայազէթի շրջանում առաջին տեղն է բռնում իր լաւ յատկութեամբ։ Այս գիւղը երբեմն Ասիական Թուրքիայի վաճառականական կենդրոններից մին է եղել։ Նա ընկած է Պարսկաստանից Տրապիզոն տանող արանգիտ ճանապարհի վրայ։ Բայց այժմ ներկայացնում է մի աղքատ գիւղ։ Դիադինից ճանապարհը երկու ճիւղի է բաժանվում, որոց մէկը և գլխաւորը տանում է դէպի Սուրբ Օհաննու վանքը, որ Դիադինից մի ժամի հեռաւորութեամբ տարածուած է։ Եւ Դիադինից ուղղակի գնացի Ս. Օհաննու վանքը։ Ս. Օհաննու վանքը կանգնած է մի սարի սարոտում Եփրատ գետի աջ ափում մի ամենագեղեցիկ հովտում։ Սա համարվում է Ս. Գրիգոր Լուսաւորչի ժամանակակից։ Այս մենաստանը ծառայել է կարծես ոչ միայն նրա մէջ աղօթելու, այլ և նա ծառայել է հին ժամանակներում, ինչպէս և վերջին պատերազմի ժամանակ թշուառ Հայերին բարբարոս ասպատակողների դէմ պաշտպանվելու համար իբր մի ամրոց։ Նա պատած է բաւականին ամուր և բարձր պարիսպով։ Վանքի չորս կողմը պարսպի մէջ շինված են եղել բաւականին ընդարձակ սենեակներ, թէ՝ միաբանութեան և թէ՝ ուխտաւորների համար, մի երկյարկանի ուսումնարան, որի մէջ սովորելիս են եղել 25–40 աշակերտներ, և ախոռներ անասնոց համար։ իսկ այժմ այդ ամեն հոյակապ շինութիւնների աւերակները և փլատակներն են ներկայանում անցորդին։ Վանքի միաբանութիւնը բաւականացել չէ միայն աղօթելով, նա պատրաստել է և միաբանութեան համար ժառանգողներ, որի համար և ուսումնարանը կոչվում էր «Փառանդաւորաց» և շրջակայ գիւղերի համար քահանաներ է պատրաստել, նոյնպէս և պարապում էր անասնապահութեամբ և հողագործութեամբ։ Վանքը շինված է սև սրբատաշ բաւականին պինդ քարից չորս վիթխարի մեծութիւն ունեցող սիւների վրայ։ Նա ունի 65 քայլ երկարութիւն և 45 քայլ լայնութիւն արտաքին կողմից։ Վանքի պատերը մի մարդաչափ բարձր են կոուրից հրացան արձակելու համար ծակերով։ Ամեն մի ասպատակութեան ժամանակ վանքի շրջակայ գիւղերի Հայերը ժողովվել են այստեղ՝ կանայք և երեխայք վանքի մէջ, իսկ տղամարդիկ վանքի կուրը և յիշած ծակերից հրացաններ արձակելով պաշտպանվել են բարբարոսների դէմ։ Այսպէս պաշտպանվել են և վերջին պատերազմի ժամանակ մինչև Ռուսաց գօրքի Դարանդաղից վերադառնալը։ Մինչև վերջին պատերազմի սկսելը՝ վանքը բաւական հարուստ է եղել թէ՝ իր մատենադարանով և թէ ներքին զարդարանքով, սակայն այժմ նա մի տխուր տեսարան է ներկայացնում։ Բոլոր դռները և լուսամուտները քար ու քանդ արած, թէ գրքեր և թէ զանազան սրբութիւններ աւարի առնված կամ այրված են։ Քուրդերը չեն բաւականացել վանքը կողոպտելով, նրանք քանդել են վանքի խորանները, պահարանները, դուցէ գանձ որոնելու դիտմամբ։ Ահա տեսնում ես վանքի պատերի վրայ փորագրված զանազան սրբերի պատկերներ, որոնց աչքերը մղրախով փորած, գլուխները և ոտները կըտրած։ Ինչպէս ես անձամբ տեսայ, բարբարոսները փորձ են փորձել և վանքի գմբէթը տապալել, բայց յայտնի բան է որ այդ նրանց չէ յաջողել։

Վանքի արևելեան պատի բոլոր երկրութեան վրա երևում է մի շարք արձանագրերի, բայց տառերը բոլորովին աղաւաղված լինելով կարդալ անկարելի է լինում։ Միաբանութեան վարդապետներից մէկը ասաց, որ այդ արձանագրերը արտադրված են եղել մագաղաթի վրա, բայց վերջիններս էլ վանքի միւս թանկագին ձեռագրերի հետ քուրդերի բարբարոսութեանը զոհ են գնացած։ Այժմ վանահայր վարդապետը ձեռք է զարկել կարողութեան չափ նորոգել և կարկատել վանքը։ Սուրբ Օհաննու վանքից ես ճանապարհս ուղղեցի դէպի արևելահիւսիս Տաճկաստանի սահմանագլուխը։ Ես դիտմամբ իմ ճանապարհորդութիւնս շարունակեցի ուսուցչեան զով եղանակին տափարակ լեռների վրայով, որոնք Ալադաղի մի մասն են կազմում։ Առաւօտեան զով և մեղմիկ զեփիւռը ծածանելով խնկահոտ մաքուր խոտը և իր շշնջիւնը խառնելով թռչունների քաղցրիկ դայլայլիկների հետ՝ զմայլեցնում է մարդու մի ախորժ տպաւորութեան ներքոյ։ Լեռների և բլուրների երակներից անհամար աղբիւրները կարկաջահոս վազելով ձորակների միջով, կազմում են պատմական Եփրատի սկիզբը, որին այս տեղ Մուրատ գետ են կոչում։ Այս Եփրատին ջուր հասցնող և ճանապարհ տուող լեռների անուշահոտ գոյնզգոյն ծաղիկներով զարդարված գագաթների վրա նստած ժամանակ կարծում ես թէ գտնվում ես նախահօր եդեմական բնակարանի դռան առաջ։ Բազրևանդի լեռների բնութեան ներգործած գեղեցիկ և ախորժ տպաւորութիւնը նկարագրելու և այս տպաւորութեանը մարմին տալու համար, հարկաւոր է բանաստեղծի հմուտ գրիչ։ Եւ ահա Հայի արիւնով ներկած այդ գեղեցիկ սարերին և դաշտերին տէր է ներկայանում կիսավայրենի և բարբարոս քուրդը։ Նա վայելում է թշուառ Հայից կողոպտածը՝ Հայ երկնքի տակ, Հայ դաշտերում և լեռների գագաթների վրա անդորը ոգով, առանձին իմն բարբարոսներին յատուկ ախորժակով։ Այն րոպէին երբ լեռների գագաթների վրա նստած հրճվում և զմայլում ես բնութեան գեղեցկութեամբ, երբ պայծառ արփին իր դլուխը հանելով բարձր սարերի գագաթների ետևից կարծես ողջունում է քեզ, երբ նրա կեանք տուող ցողերը սփռելով՝ լափում է համեմատ իր տարածվելուն՝ բուսեղէնների վրա հանդչող և նրանց կենդանութիւն տուող ջրային հիւլանիթը, ակամայ միտդ ես բերում, որ քո մայրենի հողի վրա պանդուխտ ես շրջապատված վայրենի քրդերով, որոնք առանձին հպարտութեամբ և պարծանքով այդ գեղեցիկ դաշտերի և սարերի տէր են կոչում իրանց, և յանկարծ մի սարսուռ, արհամարհանք և ատելութիւն միանուագ զգալով դէպի քեզ շրջապատողները, լուռ և մունջ անդիտակցաբար վերկենալով տեղից շարունակում ես ճանապարհդ քուրդ ուղեկցիդ հետևելով։

Դեռ ապրիլի երկրորդ կիսամանում քուրդը բարձրանում է հեղհեղուկ իր ձիուավայ խրճիթից համեմատ ձիւնի հեռացնելուն դէպի Կորդուաց լեռների կատարները իր ոչխարի հօտերով և մատակ ձիաների երամակներով։ Նա մեծ մասամբ ոչխար և ձիաներ է պահում, և ասել չի ուզի, որ նրանք՝ ինչպէս և տեղացի Հայերը՝ նախահօր հովուական սիստեմայից ձեռք չեն վերցնում, և դուցէ առաջիններս երբէք նոր անասնապահական կանոններին չը հմտանան, որովհետև նրանք ամենախստութեամբ արհամարհում են քաղաքակրթութիւնը և խուսափում են նրանից։ Ոչխարները ըստ մեծի մասին սպիտակ բուրդ ունեցողներ են, իսկ ձիաները պատկանում մեր երկրում հռչակված «քանլան» կոչված տեսակին, և վերջիններս քրդերի մէջ ծախվում են 50—300 մինչև անգամ և 500 բուբլով։ Շատ քիչ կը պատահի որ քուրդը համաձայնվի ծախել իր մատակ ձին, և եթէ պատահի ծախել, անպատճառ հարկից ստիպված, այն ժամանակ նրանց մէջ ընդունված է, որ ծախելու ձիու առաջին էգ ծնունդը վերադարձնելու է ծախողին առանց փոխի, իսկ դրա փոխարէն ծախողը ձին ծախելու ժամանակ դիջողութիւն է անում նրա դնում, օրինակ. եթէ ձին արժէ 100 բուբլ, ծախում է 80 բուբլով։ Բայց որովհետև ծոյլ քուրդը չէ հոգում ձմեռվայ համար ոչխարների և առ հասարակ անասունների համար կերակուր պատրաստել և անասունները ձմեռը իրանք պէտք է խորշիւնի տակից կերակուր որոնելով ապրեն մինչև գարնան գալը, ուստի գարունքին անասունների մէկ մասը սատակում է նիհարութենից, իսկ մնացած մասը յունիսի կէսին պիրանալով հասնում են իրանց բնական դրութեանը։ Քուրդերը կովեր առ հասարակ չատ փոքր թուով են պահում և այնքան միայն որ իրանց տեղափոխելու հարկաւոր թուով բեռնակիր եզներ ունենան։ Նրանք ամեն ծանրութիւն բարձում են իրանց եզների վրա և երբեմն կովերի վրա, եթէ տան ծանրութեան համեմատ եզներ չը կան։

Մաղիեռ Տէր Պետրոսեան
ՄՇԱԿ

ՏՕՔԹՕՐ Ց. ԹԻՐԵԱՔԵԱՆ

Վերոյիշեալ Տօքթօրն այս անգամ փարիզ իւր բժշկական ուսմունքն աւարտած և վկայագիրն ընդունելով մայրաքաղաքս դարձած ըլլալով, պատիւ ունի ծանուցանել արդոյ հասարակութեան թէ ուրբաթ օրերը իւր բնակարանը կէտիկ փաշա բաղնիքին դիմացի Նորաշէն տունը ամեն տեսակ հիւանդութեանց ժամը 3 էն մինչև 8 ը ձրի պիտի նայի, երկուշաբթի օրերը 3էն մինչև 8 ը Մահմուտ փաշա Մ. Հ. Գափամահեանի դեղարանը, և հինգշաբթի օրերը յիշեալ ժամերը Մուսալլա թաղը Էճզաճի գրիգոր աղային դեղարանը պիտի գտնուի. իսկ մնացեալ օրերը իրեն դիմող հիւանդները իր տունը պիտի ընդունի։

3

ԻԼԱՆ

Սէքիզ լիպրա իւչ քարթլըք ամէրիքան, թօփ 15,000, պէհէր լիպրասը եանի եիւզ քըրք իքի տիրհեմի 7 ղրշ։

Օն պիր լիպրա իւչ քարթլըք ամէրիքան, թօփ 35,000, պէհէր լիպրասը եանի եիւզ քըրք իքի տիրհեմի 7 ղրշ։

Նիզամիյէ էլպիսէ անպարը իչուն Տարը Շուրայա մահֆուզ նումունէլէրի վէչհ իլէ միւպայեա օլունաճաք պարատէ մուհարրեր իւլ մը քասար ամէրիքան թարիխի քօնթրաթօտան իթիպարէն քըրք պէշ կիւն միրուրինտէ թէսլիմէ պէտ իլէ ալթը յաս թաքսիմ օլունարաք պէհէր մահ պիրէր թաքսիթի թէսլիմ իտիլէրէք արքասը ալընմաք վէ մաքսուզ սէնէտլէրինին վիրուտի իլէ մուամէլէսինին խիթամընտա էսմանըն նըսֆը հէման վէ նըսֆը տիկերի օթուզ պիր կիւն միրուրինտէ սիմ մէճիտիյէ իկիրմի ղրշ հիսապը իլէ նիզամիյէ խազինէսինտէն վերիլմէք իւզրէ ֆիյաթը մուրաքաքամէլէրի իլէ թալիպի էօհատէսինտէ օլուպ իլուլ բումինին տէօրտիւնճի բազար իրմէսի կիւնիւ քարարը գաթիսի վերիլէճէյինտէն, իթասընա թալիպ օլանլարը եէվմի մէզքուրատ Տարը Շուրայի ասքէրիյէ կէլմէլէրի։

29 աղուսթոս 1878

Պապը Սէրասքէրի

Նիզամիյէ նանը աղիզ իտարէսի իչուն Տարը Շուրատա մահֆուզ նումունէսի վէչհ իլէ միւպայեա օլունաճաք օլան օն իքի պին չուվալ իւչհունճիւ նիւմէրօ իսթանպոլ տաքիքինին թարիխի քարարատան իթիպարէն եէվմիյէ պիներ չուվալը միւթէահիւտին տէկիրմանը իսկէլէսինտէ մանուսայա թէսլիմ օլունարաք օն իքի կիւնտէ արքասը ալընմաք վէ մանուսայա թէսլիմ օլունճայա քատար վուգու պուլմաք քեաֆֆէլի տէտարիֆի միւթահիւտէ այնա օլուպ իլուլ բէմի իլէ մանուսա իւճրէթի վէ մանուսատան իխրաճիյէսի Նիզամիյէ խազինէսինէ բաճի պուլունմաք վէ էսմանը լիրայի Սամանի եիւզ ղրշ հիսապը իլէ մաքսուզ սէնէտինին վիրուտի իլէ մուամէլէսինին խիթամընտա հէման Նիզամիյէ խազինէսինտէն վերիլմէք շարթը իլէ պէհէր չուվալը եանի ալթմըշ քըյէսի եիւզ ղրշա թալիպի էօհատէսինտէ օլուպ իլուլ բումինին տէօրտիւնճի բազար իրմէսի կիւնիւ քարարը գաթիսի վերիլէճէյինտէն, իթասընա թալիպ օլանլարը եէվմի մէզքուրատ Տարը Շուրայի ասքէրիյէ կէլմէլէրի։

29 աղուսթոս 1878

Պապը Սէրասքէրի

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՔ

ՆԱԽԱՇԱՒԻՂ ԳԻՏՈՒԹԵԱՆՑ ԵՒ ԱՐՈՒԵՍՏԻՑ

Աշխատասիրեաց Յ-ԿԷ Յ. Մկրտեան

Ի տէր հանգուցեալ բարեյիշատակ սիրելի որդւոյս հեղինակած յիշեալ պատկերազարդ գրքոյկն՝ որ մասնաւորապէս վարժարանաց համար յօրինուած է, ասկէց առաջ ուխտ ունէր պզտիկ դրամի գնով կը ծանուցեր թէ պէտ, բայց մետաղեայ դրամոց օրըստ օրէ բարձրանալը նկատելով այսուհետև մէկ 10նոց թղթադրամի վաճառել որոշուած է 'ի դիւրութիւն գնողաց։

կեդրոնատեղին է գրավաճառ Պաղտասար աղա Սրապեանի գրատունը 'ի Մէրճան չարշը։ Ուրիշ Հայ գրավաճառաց քով ալ կը գտնուի։

Ազգային վարժարանաց համար սովորական գնէն զեղչ կըլլայ։

Յովհ. Խոս. Մկրտեան

ԳՈՐԾՆԱԿԱՆ ՏՈՄԱՐԱԳԻՏՈՒԹԻՒՆ

ՊԱՐԶԵՒԿՐԿՆԱԿ—ՏՈՄԱՐ

Որ պարունակէ

Փոխանակագրի, Հաշուեցուցի, Բեռնագրի, Վարձաղրի, Հաշուընթացի և սոյնց ձևեր և օրինակներ

Ի ՊԷՏՍ ՎԱՐԺԱՐԱՆԱՑ ԵՒ ՎԱՃԱՌԱԿԱՆԱՑ

Ի Ն. Տէ-ԼԷՆԷՆԷ

Տպագրեալ արդեամբք և ծախիւք Մեծ. Տիգրան Էֆէնտի Գարակէօզեանի

Կեդրոնատեղին է Պոլիս Մէրճան չարշը թիւ 33 Սրապեան Պաղտասար աղայի գրատունը. Բերայ Մ. Վայսի գրատունը, և ուրիշ Հայ գրավաճառաց քով։

Դին կազմեալ օրինակին երեք քառորդ մէճիտ։

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ԵՐԿՈՏԱՍԱՆ ԿԵՍԱՐԱՑ

Թարգմանեց Ե. Մ. Ս.

Սոյն պատմութեան երկրորդ և վերջին հատորն ալ Իզմիրի Տէտէեան եղբարց տպարանէն 'ի լոյս ընծայուելով, կը ծախուի Եէնի ճամի Զիլինկիրլէր ճատտէսի թիւ 2 Ս. Ղուկասեան դրատունը և ուրիշ գրավաճառաց քով։ Դին 1 ֆրանք 25 սանթիմ։

ՇԱՀԷՆՆ 'Ի ՍԻՊԻՐ

ԿԱՄ ԳԱՂԹԱԿԱՆ ՀԱՅ

Գրեց Ս. Տէր Սարգիսեանց

կը ծախուի ամեն Հայ գրավաճառաց քով։ Դին 2 1/2 ֆրանգ։

ՆՈՐ ԴԱՍԱԳՐՔԵՐ

ԸՆԹԵՐՑԱՐԱՆ

Ա. ՄԱՍ

Հրատարակեց Գ. Մուրեան

Ի Զմիւռնիա

Դպրոցներու մէջ գործածուելու համար ընտանի լեզուով գրուած, զբաւարճալի և միանգամայն հրահանգիչ դասագիրք մ'է։

Կը գտնուի Կ. Պոլսոյ Հայ գրավաճառաց քով դին 35 սանթիմ։

ԳՈՐԾՆԱԿԱՆ ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ ԴԱՂԴԻԵՐԷՆ ԼԵԶՈՒԻ

ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆ ԴՊՐՈՑԱՑ ՀԱՄԱՐ

Հեղինակ

Լէ-ՎԷՆ ԼԷՎԷ

Աշխատասիրեաց Ա. Պիպէռճեան

Հեղինակէն հրամանաւ պաշտօնական

Սոյն գործնական քերականութիւնը Գաղղիոյ երկրորդական վարժարանաց նախապատրաստական կարգերուն համար ընդունուած ամենէն ընտիր և յարմարագոյն դասագիրքն ըլլալով, տարակոյս չկայ որ ազգային վարժարանաց մէջ ալ նոյն ընդունելութիւնը պիտի գտնէ։

Կը գտնուի Կ. Պոլիս Յ. Գալաֆեան և այլ գրավաճառաց քով, և Բերա Մօսիւ Վէրսի գրանոցը։ Դին 12 ղ։

ՇԻՐՔԷԹԻ ԽԱՅՐԻԷԻ

ՇՈԳԵՆԱՒՆԵՐՈՒՆ ԵՐԹԵՒԵԿԻ ԺԱՄԵՐԸ

1878 ՕԳՈՍՏՈՍ 1 ԵՐԵՔՇԱԲԹԻ ՕՐԷՆ ՍԿՍԵԱԼ

ՄԻՆՉԵՒ ՕԳՈՍՏՈՍ 31

ԲՈՍՓՈՐԷՆ ԻՋՆՈՂ ՇՈԳԵՆԱՒՆԵՐԸ

Ժ-ամ	Ե-րեքշաբթի Եղեր	Թիւ
11 30	Եկեղեցական Մէզարպ. Պէյիւքտէրէ, Թարապիա, Եէնիքէյ, Սթէնիա, Էմիրկ. Պոյաճ. Ր. Հիսար, Պէշիք։	34
12	Ր. և Ա. Գավաղէն Եէնիմ. Մէզար. Պէյիւքտ, Թար. Եէնիք. Էմիրկ. Ր. Հիսար, Պէշիք։ (Ուրբաթ օրերը ժամը 12 1/4 ին Արնավ. հանդիպելով)։	28
1	Եէնիմահ. Մէզարպ. Պէյիւքտ. Թարապ. Եէնիքէյ. Սթէն. Էմիրկ. Ր. Հիսար, Պէշիք, Արնավ. (Բացի ուրբաթէ)։	18
1 45	Եէնիմ. Մէզարպ. Պէյիւքտ. Քիրէճ. Թարապիա, Եէնիք. Էմիրկ. Պոյաճ. Ր. Հիսար, Պէշիք։	20
2 30	Եկեղեցական Մէզարպ. Պէյիւքտ. Թարապիա, Եէնիք. Էմիրկ. Ր. Հիսար, Պէշիք, Արնավ Գուր. Պէյլէր. Օրթաք. Պէշիկ։ (Ուրբաթի օրերը 2 3/4 ին)։	19
3 15	Մէզար. Պէյիւքտ. Թարապ. Եէնիք. Էմիրկ. Պոյաճ. Ր. Հիսար, Պէշիք, Արնավ. Գուրուչ Օրթաք. Պէշիկ։	34
4 15	Եէնիմ. Մէզարպ. Պէյիքտ. Թարապ. Եէնիք. Էմիրկ. Պոյաճ. Ր. Հիսար, Արնավ. Օրթաք. Պէշիկ։ (Ուրբաթի օրերը Գանլ.)։	32
5 15	Եէնիմահ. Մէզար, Պէյիւքտ. Թարպ. Եէնիք. Էմիրկ. Ր. Հիսար, Արնավ. Պէյլ. Օրթաք. Պէշիկ։	23
6 15	Եկեղեցական Պէյիւքտ. Թարապիա, Պէյքօղ, Եէնիքէյ, Էմիրկ. Գանլըճա, Ր. և Ա. Հիսար, Գանտիլլի, Արնավ. Զէնկ. Պէյլէր. Օրթաքէյ, Գուզկ. Պէշիկթաշ, Իսկիւտար։	1
8 15	Ր. և Ա. Գավաղէն Եէնիմահ. Մէզար. Պէյիւք. Թարապիա, Պէյքօղ, Եէնիք. Էմիրկէն, Պոյաճ. Ր. Հիսար, Պէշիք, Արնավ. Գուրուչ. Օրթաքէյ, Պէշիկթաշ։	20
10 15	Մէզարպուրնուէն Պէյիւքտ. Թարապիա, Եէնիքէյ, Էմիրկէն, Ր. Հիսար, Արնավ. Օրթաքէյ, Պէշիկթաշ։	22

Արեւելեան Էեղէն

11 30	Արնավուտքէյէն, Գուրուչ. Օրթաք. Պէշիկթաշ։	2
12	Պէշիքէն Արնավուտ. Գուր. Օրթաք. Պէշիկ։	22
12 30	Արնավ. Գուրուչ. Օրթաք. Պէշիկ. Գապաթաշ։	23
1	Արնավուտքէյէն, Գուրուչ. Օրթաք. Պէշիկթաշ։	2
1 35	Արնավուտքէյէն, Գուրուչ. Օրթաք. Պէշիկթաշ։ Գապաթաշ։	22
2	Արնավ. Գուրուչ. Օրթաք. Պէշիկթաշ, Գապաթ։	23
2 30	Արնավ. Գուր. Օրթաք. Պէշիկ. Գապաթաշ։	28
10	Արնավուտքէյէն ուղղակի կամուրջ։	23
10 45	» » »	1

Աֆրիկեան Էեղէն

11 30	Պէյքօղ, Բաշապ. Գանլըճա, Ա. Հիսար, Գանտիլլի, Վանիքէյ. Զէնկէյքէյ, Պէյլերպէյ, Գուզկ.	21
11 30	Վանիքէյէն Զէնկէյ. Պէյլէր. Գուզկ. Գապ։	1
12 15	Պէյիւքտ. Թարապիա. Պէյքօղ, Բաշապ. Ր. Փ. մահ. Գանլ. Ա. Հիսար, Վանիք. Զէնկէյ. Պէյլէր. Գուզկ.	32
1 30	Պէյիւքտ. Պէյքօղ, Բաշապ. Գանլ. Ա. Հիսար, Գանտ. Վանիք Զէնկ Պէյլ. Գուզկ. (Ուր. օրերը ժամ 2ին)։	17
3 30	Ր. և Ա. Գավաքէն Մէզարպ. Պէյքօղ, Ր. Պահճէ, Ր. փ. մահ. Սթէն. Գանլ. Պոյաճ. Ր. Հիսար, Պէպէք, Պէյլ. Վանիք. Սիրքէճի. (Բացի ուրբաթէ)։	21
3 30	Պէյքօղ, Բաշապահ. Ր. փաչա մահալլէսի, Գանլ. Ա. Հիսար, Գանտ. Վանիք. Զէնկ. Պէյլ. Գուզկ. Գապ. (Բացի ուրբաթէ)։	2
9	Պէյիքտ. Պէյքօղ, Բաշապ. Գանլըճա, Ա. Հիսար, Գանտ. Վանիք Զէնկէյ. Պէյլերպէյ, Գուզկ. Իսկ. (Ուրբաթ օրերը Ր Փ. մահ.)	19
9 45	Վանիքէյէն ուղղակի կամուրջ։ (Բացի ուրբաթէ)։	2

ԿԱՄՈՒՐՋԷՆ ԵԼՆՈՂ ՇՈԳԵՆԱՆԻԵՐԸ

Ե-րեքշաբթի Եղեր

1	Պէշիկ. Օրթաք. Արնավ. Ր. Հիսար, Էմիրկէն, Եէնիք. Թարապիա, Պէյիւքտ. Մէզարպ. Ր. և Ա. Գավագ։ (Ուրբաթի օրերը Գավագները չերեքշաբթով Եէնիմահ)։	21
12 45	Գապ. Իսկ. Պէշիկ. Գուզկ. Օրթ. Պէյլ. Զէնկ. Արնավ. Գանտ. Ա. և Ր. Հիսար, Գանլը Էմիրկէն, Եէնիք. Պէյքօղ, Թարապ. Պէյիւք. Եէնիմահ։	1
1 45	Պէշիքթ. Օրթաք. Արնավ. Պէպէք. Ր. Հիսար. Պոյաճ. Եէնիք. Թարապ. Պէյիւքտ. Մէզարպ։	34
3 15	Պէշիկ. Օրթաք. Գուրուչ. Արնավ. Պէպէք, Ր. Հիսար, Էմիրկ. Եէնիք. Թար. Պէյիւք. Եէնիմ։	23
5	Պէշիկ. Օրթաք. Արնավ. Ր. Հիսար, Էմիրկ. Եէնիք. Պէյքօղ, Թարապ. Պէյիւքտէրէ, Մէզարպ. Ր. և Ա. Գավագ։	20
6 30	Իսկ. Պէշիկ. Գուզկ. Օրթաք. Պէյլ. Զէնկ. Արնավ. Գանտ. Ր. Հիսար, Պոյաճ. Եէնիք. Թար. Պէյիք։	19
8	Պէշիկ. Օրթաք. Արնավ. Ր. Հիսար, Էմիրկ. Եէնիք. Թարապ. Պէյիւքտ. Մէզարպուրնու։	22
9 30	Պէպէք, Ր. Հիսար, Էմիրկ. Սթէն. Եէնք. Թար. Պէյիք. Մէզ. Եէնիմ։ (Ուրբաթի օրերը ժամ 10ին Քիրէճ.)։	34
10 15	Պէպէք, Ր. Հիսար, Պոյաճ. Եէնիք. Թարպ. Քիրէճ. Պէյիւք Մէզար. Եէնիմահ։ (Բացի ուրբաթէ)։	32
10 40	Պէշիկ, Օրթաք Արնավ. Պէպէք, Ր. Հիսար, Էմիրկ. Եէնիք. Թարապ. Պէյիւքտ. Մէզարպ. Եէնիմ։	18
11 15	Պէպէք, Ր. Հիսար, Պոյաճ. Էմիրկ. Եէնիքէյ, Թարապիա, Պէյիւքտ. Մէզարպ. Եէնիմահալլէ։	20

Արեւելեան Էեղէն

12 30	Ուղղակի Արնավուտքէյ։	2
1	» »	22
1 30	» »	23
1 45	» »	28
9 15	Գապաթաշ, Պէշիկթաշ, Օրթաք. Գուրուչ. Արնավ.	23
10	Գապաթաշ, Պէշիկթաշ, Օրթաք. Գուր. Արնավ.	1
11 5	Գապաթ. Պէշիկ. Օրթաք. Գուրուչ. Արնավ.	23
11 35	Պէշիկթաշ, Օրթաք. Գուրուչ. Արնավ.	1
12	Պէշիկթաշ, Օրթաք. Գուրուչ. Արնավուտ. Պէպէք։	22

Աֆրիկեան Էեղէր

2 15	Պէշիքթ. Օրթաք. Ր. Հիսար, Էմիրկ. Պէյքօղ։ (Բացի ուրբաթէ)։	2
2 30	Իսկ. Գուզ. Պէյլ. Զէնկ. Վանիք. Գանտ. Ա. Հիսար, Գանլ. Բաշապ. Պէյքօղ, Պէյիւքտ. Եէնիմահ. (Ուրբաթ օրերը Ր Փ. մահ)։	32
9	Գուզկ. Պէյլ. Զէնկ. Վանիք. (Բացի ուրբաթէ)։	2
9 30	Գուզկ. Պէյլերպ. Զէնկ. Վանիք. Գանտ. Ա. Հիսար, Գանլ. Բաշապ. Պէյքօղ, Պէյիք. Մէզ. Ր և Ա Գավաքներ։	28
10 էն	Եռքը Սիրքէճիէն Պէյլէր. Վանիք. Պէպէք Ր. Հիսար, Պոյաճ. Գանլ. Սթէն. Ր. փաչա մահ. Բաշ. Պէյքօղ։ (Բացի ուրբաթէ)։	21
10 30	Գապաթ. Գուզկ. Պէյլ. Զէնկ. Գանտ. Ա. Հիսար, Գանլ. Ր. փաչա մահ. Բաշ. Պէյքօղ, Թար. Պէյիք.	17
11 15	Գուզկ. Պէյլ. Զէնկ. Վանիք. Գանտ. Ա. Հիսար, Գանլ. Բաշապ. Պէյքօղ, Պէյիւքտէրէ	20
11 40	Գապաթ. Գուզկ. Պէյլ. Զէնկ. Վանիք. Արնավ։	2

ԱՅԵՐԻ ՎԻԿՕՐԸ

Ով որ իր մաղերուն թափիլը չուզեր, «Այերի Վիկօր» կոչուած մաղի անուշահոտ ջուրէն գործածելու է. ուրիշ ամեն տեսակ մաղի ջուրերը կամիւղները՝ որ մաղ չի թափելու համար կը ծախուին, բոլորն ալ անօգուտ են. իսկ Վիկօրի օգուտը միլիոնաւոր փորձերով տեսնուած է, և Պոլսոյ ու գաւառաց մէջ օր օրի գործածողներուն թիւը կաւելնայ։ Անոնք որ իրենց մազերուն գեղեցկութիւնը կորսնցնելու վրայ են, շուտով գործածեն աս ջուրէն որ'ի վերջոյ չզղջան։ Թափելու վրայ եղող մազերը կը հաստատէ ու կամրապնդէ, թափածներուն տեղը մազ կը բուսցնէ երբոր մաղերուն արմատը վնասուած չէ, ու ճերմկած մազերը անպատճառ իր նախկին բնական գոյնին կը բերէ. գործածելուն կերպը շիշերուն հետն է. կը ծախուի Կ. Պոլիս Ղալաթիա Մինասեան և ընկերաց Ամերիկայի Մաղազան։

ՕՃԱՌ

Անուշահոտ օճառ, մորթը կը կակուղցնէ ու լեղի ջուրով ալ կը փրփրի, տեսակը խիստ աղնիւ ու գինը շատ աժան է. կը ծախուի Կ. Պոլիս Ղալաթիա Մինասեան և ընկերաց Ամերիկայի մաղազան։

ԱՄԵՐԻԿԱՅԻ ՄԱՂԱԶԱՆ

Այս լրագիրը չարաթը երեք անգամ կը հրատարակուի, երեքշաբթի, հինգշաբթի եւ չարաթ օրերը։ Բաժանորդագրութեան տեղերն են Ղալաթիա Սանտրքճիլար ճատտէսի թիւ 198, Նօրօ խան Մասիսի խմբագրատունը։

Իսկ գաւառաց մէջ հեռաւեալ հոգաբարձուաց սենեակները։

ԻԶՄԻՐ. Սահփան աղա Ցէտէեան.
ՆԻԿՈՄԻԴԻԱ. Խոսրով Էֆ. Էսկիճեան.
ՊՐՈՒՍԱ. Յակոբ աղա Թանկէրեան.
ԹԷՔԷԻՐՏԱՂ. Տ. Արիստակէս աւագ քահանայ Ֆէսլեան.
ՏՐԱՊԻԶՈՆ. Խաչատուր աղա Էլմասեան.
ԿԱՐԻՆ. Կարապետ պատուելի Ֆաքարեան.
ՎԱՆ. Կարապետ աղա Նաթանեան.
ՄՈՒՇ Մկրտիչ աղա Փօթիկեան.
ԵԱՇ. Մ. աղա Խաչիկեան.
ՖՈՓՇԱՆ Ֆէրհատ աղա Ի Ֆէրհատեան.
ԵՐԶՆԿԱՑ. Թադէոս աղա Բագրատունի.
ՍԻՎՐԻՀԻՍԱՐ. Սրժ. [illegible]

Ուրիշ քաղաքներէ [illegible] տեղերն աս տեղերէն [illegible] ինքն ինքիր։

ԽՄԲԱԳԻՐ—ՏՆՕՐԷՆ
Կ. Ս. ԻԹԻՃԵԱՆ

Ի ՏՊԱՐԱՆԻ ՄԱՍԻՍ ԼՐԱԳՐՈՑ
ԳԱԼԱԹԻԱ. ՆՈՐՕ ԽԱՆ